Սուագ շաբաթին աղա Գէորգ Գօքչասվն եկն մեզ տեսութեան մէկ գլուխ շաքար մէկ ֆունտ չայ, և 20 շահմայի ընծայ բերուց։ Ծաղկազարդ կիրակէն պատարագ մատուցի, 4 մանէթ ժամուց եկաւ, զայն եւս աղքատաց եաուք։ Թիֆլիզու աղա Շիրմազանն յունիսի 10ին, մեզ ուղարկել էր երկու գլուխ շաքար և մէկ ֆունտ չայ։ Շամախեցի աղա Պետրոսն, յունիսի 12ին եկաւ մեզ տեսութիւն երեք մանէթ ժամուց ետ, այսօր որէ Վարդավառ յուլիսի 14, յաջորդ Պետրոս վարդապետն ժամարար և նըվաստս Քրիստոսի մարմին և արիւն ճաշակող։ 14 ամիս է որ Սաղիանու վանքումն եմ, վանիցս մինչեւ Շամախի քաղաքն երեք ժամէն ճանապար է, չէի տեսած. օգոստոսի 8 գնացի ի քաղաքըն Շամախի ի տուն սուագ քահանայ Տէր Յոսէփ Մատաթեանի. սոյն քաղաքումս ոչ ոք չտեսի միայն Տէր Յոսէփն և իւր որդի չինովնիկ Պետրոսն։ Բայց քաղաքական պահպանիչ զօրաց կառաւարիչ պոլկովնիկ Թովմաֆիլօք Տրաֆիմիչ Ղովորէկին հրավիրեց իւր տունն և մեծ մարդասիրութիւն եցոյց, զկնի երկու աւուրց դարցայ ի վանքս։

Բարձր գերազանցութիւն Ձեր.

Մի՞թէ ես այնքան անբաղտ ոմն եմ, որ ահա երկու խնդիրք եմ գրել Ձերին բարձր գերազանցութեան ոչ մէկի պատասխանն մինչեւ այժմ չեմ ստանում. մանաւանդ զի ըստ կանոնի և ամենողորմ թագաւորութեան բանք բանտարկեալ անցաւորացն եւս վերջանան մինչեւ լրանալ միոյ տարոյն։ Իսկ ես ոչինչ յանցանք չունելով ահա մին տարուց աւելի է ոչ ստանամ զվճիռ ինչ ըստ խնդրագրութեանցս, և թէ ինչ իցէ պատճառն ոչ գիտեմ, և եմ ի միջի անտանելի նեղութեան ի ծերութեան ժամանակիս, վասն որոյ, ամենախոնարհաբար խնդրեմ, եթէ արդեօք ես այնքան անբախտ ոմն եմ, որ արժանի չեմ Ձերին օգնականութեան. տալ ինձ հրաման դառնալ խնդրանօք առ որ հարկն է. վասն զի նեղութիւն վիրաւորեալ անձին իմոյ հատեալ զհամբերութիւն իմ հոգեկան. եւս դժվար իմն է, առանց իւիք յանցանաց կրել զայսպիսի անպատուութիւն, ընդ հովանեաւ արդարադատ և ամենողորմ թագաւորութեան Ռուսաց. իսկ եթէ այլ տէրութեան մէջ